Save the Children

Humanitarian Aid
and Civil Protection

Խաղ

«Չորս Չ-երի կանոն»

Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիր

Ուղերձ Մանուկներին

Բարև, իմ սիրելի՛ փոքրիկ բարեկամ: Ես ցանկանում եմ քեզ հետ ընկերանալ: Բայց մինչ այդ, ուզում եմ քեզ ծանոթացնել իմ պատմությանը: Ես ստեղծվել եմ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան գրասենյակում:

Իմ սիրելի՛ փոքրիկ բարեկամ, երբ «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության հայաստանյան գրասենյակում ինձ ստեղծում էին, ասացին, որ ես պետք է օգնեմ քեզ ու քո շրջապատի մեծերին ճամփորդել մի հետաքրքիր աշխարհ: Մեզ հետ միասին կճամփորդի նաև իմ ընկերը, որը մեզ շատ կօգնի հասկանալ, ճիշտ քայլել ու խաղալ այդ աշխարհում: Բայց մինչ այդ դու պետք է քո մեծերի հետ միասին սովորես խաղի կանոնները: Չմոռանամ ասել, որ իմ ընկերոջ անունը Փորձանքիկ է, իսկ այն աշխարհը, ուր մենք միասին կճամփորդենք, կոչվում է «Աղետների ռիսկի նվազեցում», որտեղ ապրում և չարաճճի խաղեր է խաղում իմ ընկեր Փորձանքիկը: Մենք այդ աշխարհում կծանոթանանք նրա չարաճճի խաղերի հետ, կսովորենք այդ խաղերի ժամանակ վարքի ճիշտ ու սխալ կանոնները, քանի որ, եթե դրանք չիմանանք ու չպահպանենք իմ ընկերոջ՝ Փորձանքիկի խաղերից կվնասվենք:

Դե՛ ինչ, արի՛ սկսենք ու մեզ հաջողություն ցանկանանք

Խաղ «Չորս “Չ”-երի կանոնը

Խաղի նպատակը: Երեխաները կիմանան անհրաժեշտ առաջին վարքականոնները, որոնք պետք է պահպանել երկրաշարժի ժամանակ:
Խաղի մասնակիցները: 2-3 երեխա:
Տարիքը: 3-10 տարեկան
Խաղի բովանդակությունը: Խաղը իր մեջ պարունակում է **Գլոբուսե փորիկով մարդուկի՝ Երկրաշարժիկի 1** նկար և հիմնական անհրաժեշտ վարքականոնների 4 նկարներ:
նկար 1 – չաղմկել, որ լսել
առաջին կանոն- երկրաշարժի ժամանակ չի կարելի բղավել, որպեսզի լսենք՝ ուսուցիչն ինչ է ասում մեզ:
նկար 2 – չվազել, որ չհրել
երկրորդ կանոն – երկրաշարժի ժամանակ չի կարելի վազել, որպեսզի չհրենք մյուսներին, այլ պետք է շարքով, արագ դուրս գալ:
նկար 3 – չհրել, որ չվնասել
երրորդ կանոն – երկրաշարժի ժամանակ չի կարելի հրել մյուսներին, քանի որ նրանք կարող են ընկնել և խցանում առաջացնել:
նկար 4 – անվտանգ վայրից չվերադառնալ, որ չվնասվել
չորրորդ կանոն – երկրաշարժի ավարտից հետո առանց թույլտվության չի կարելի անվտանգ վայրից վերադառնալ կիսաքանդ դպրոց կամ շենք, քանի որ հնարավոր է վնասված պատերը քանդվեն և վնասեն մեզ:
Առաջադրանք: Երեխան պետք է կարողանա Երկրաշարժիկի նկարին միացնել կարևորագույն 4 կանոնների նկարները՝ բացատրելով երկրաշարժի ժամանակ ճիշտ վարքականոնները և դրանց պահպանման անհրաժեշտությունը:

***Հավելված**: Եթե խաղը կազմակերպվելու է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների հետ, ապա, հաշվի առնելով երեխաների կարողությունները, խաղը կազմակերպողին առաջարկում ենք հետևյալը.*
*Եթե երեխաներից որևէ մեկը չի կարողանում ասոցիացնել շրջանի նկարը իր համապատասխան նկարով կամ նկարներով, ապա խաղավարը երեխային սովորեցնում է նկարները իրար հետ համդրել՝ նրանց վրա գրելով միևնույն թվանշանը: Օրինակ՝ **շրջանի վրա գրում է 1 թվանշանը, նրա ասոցիատիվ նկարի վրա նույնպես գրում է 1 թվանշանը:** Եթե երեխան չի պատկերացնում թվանշանները, ապա առաջարկում ենք նույն գույնի թղթից (օրինակ՝ կարմիր գույնից) կտրել այն երկրաչափական պատկերը, որը երեխան լավ գիտի (օրինակ՝ քառակուսի), ու փակցնել և՛ շրջանի, և՛ նրա համապատասխան ասոցիատիվ նկարի կամ նկարների վրա: Եթե երեխան չգիտի և չի պատկերացնում ոչ մի երկրաչափական պատկեր, ապա խաղավարը գունավոր թղթից կտրում և փակցնում է մի փոքրիկ կտոր շրջանի և նրա համապատասխան ասոցիատիվ նկարի կամ նկարների վրա:*

Սույն խաղը տպագրվել է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության Հայաստանյան ներկայացուցչության կողմից «Աղետների ռիսկի նվազեցման ներառական ծրագիր-2»-ի շրջանակներում, որը ֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO) կողմից: Սույն խաղի մեջ արտահայտված տեսակետները կարող են չարտահայտել Մարդասիրական օգնության և քաղաքացիական պաշտպանության հարցերով գլխավոր վարչության (ECHO) տեսակետները:

Է

Նկար #2

Է

Նկար #1

Է

Նկար #3

Է

Նկար #4